ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«6» 02 2012 թ. N 10

Լոռու մարզպետ
պարոն Ա.Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Լերմոնտովո համայնքի ղեկավարի թիվ 1,2,3,4,5,6 Որոշումները և ավագանու թիվ 1,2,3 Որոշումները :

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«18» 01 2012 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 1

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Կորյուն Շահբերեկի Տոլմաչը դիմել է գյուղապետարան իրեն պատկանող ակր 5.9 անասնաբուծության համար կից հողամասի հողօգտագործման իրավունքը ձևակերպելու խնդրանքով, որպես անասնաշենքի սպասարկման տարածք:

Կ. Շ. Տոլմաչը փաստացի զբաղեցնում է 2640 քմ հողամաս, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում՝

1. Ղեկավարվելով «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետով՝ վերականգնել Կ. Շ. Տոլմաչի նախկին հողահատկացման հիմքերը 2640 քմ մակերեսի չափով, որը օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում է Կ. Շ. Տոլմաչի:
2. Հողամասի սահմանները որոշվում են գյուղապետարանի կողմից 2640 քմ մակերեսով հողամասի համար տրված գլխավոր հատակագծով:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 20 » հունվարի 2012թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

Լերմոնտովո համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի 11 կետով, որոշում եմ.

1.Լերմոնտովո համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնի ՝ առաջատար մասնագետի (3.1-2), զբաղեցնելու համար 2012 թվականի փետրվար ամսին անցկացնել մրցույթ:

2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն «Լոռու մարզ» թերթում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 25 » հունվարի 2012 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 3 -Ն

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ. ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն "ՀՀ բյուջետային համակարգի մասին" օրենքի 33 հոդվածի և առաջնորդվելով Լերմոնտովո համայնքի 2012 թ-ի ճշտված բյուջեն հաստատելու մասին Ավագանու 25.01.2012 թ-ի «Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2012թ-ի ճշտված բյուջեն հաստատելու մասին» թիվ 1-Ն Որոշմամբ.

1. Հաստատել համայնքի 2012 թ-ի ճշտված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:
2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2012թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 25 » հունվարի 2012 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 4

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14 հոդվածով որոշում եմ .

1.Լերմոնտովո համայնքի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) թափուր պաշտոն զբաղեցնելու նպատակով 2012 թ-ի փետրվարի 22-ին ժամը 11-ին Լերմոնտովոյի գյուղապետարանում անցկացնել մրցույթ :

2.Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Անահիտ Ֆելիքսի Հարությունյանին:

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 6 » 02 2012 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5

Նյութական օգնություն ցուցաբերելու մասին

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34 հոդվածի 5 կետով Լերմոնտովո համայնքի 2012 թ-ի բյուջեի բ. 10 խ..7 դ.1 հոդված 4729-ից համայնքի ներքոհիշյալ բնակիչներին համաձայն իրենց դիմումների , ցուցաբերել դրամական օգնություն յուրաքանչյուրին 10000(տասը հազար) դրամի չափով .

1. Չիչյովա Տատյանա Պավլովնա
2. Մանուչարյան Մարգարիտա Սամսոնի
3. Շուբինա Նադեժդա Միխայլովնա

Ընդամենը՝ 30000 (երեսուն հազար) դրամ :

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 6 » 02 2012 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 6

Նորածին երեխաների ծնողներին նյութական
օգնություն ցուցաբերելու մասին

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2012թ-ի հունվարի 25-ի Ավագանու թիվ 02 Որոշմանը 2012 թ-ի բյուջեի բ. 10 խ..4 դ.1 հոդված 4729-ից համայնքի բնակիչ Արմեն Նորիկի Պոստոլակյանին ցուցաբերել նյութական օգնություն՝ 10000 (տասը հազար) դրամի չափով՝ նորածին երեխայի խնամքի համար .

Գյուղապետ Է.Զախալյան